

ՇԵՔՄԻՐԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ

ՇԵՔՍՊԻՐԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՅ ԹԱՏՐՈՆ

(«Մակբեթի» ամբողջական բեմադրության 100-ամյակի առթիվ)

Այս տարի լրացավ Վ. Շեքսպիրի «Մակբեթ» ողբերգության հայերեն ամբողջական բեմադրության հարյուր տարին: Մեր բանասիրությանը արդեն հայտնի է, որ 1867 թ. մարտի 25-ին, Կ. Պոլսում, «Արեւիկյան թատրոնի» հիմնական ուժերով ստեղծված «Ասիական ընկերությունը» Հ. Վարդուկյանի նախաձեռնությամբ բեմադրել է «Մակբեթը»:

Մինչև վերջին տարիներս այս շատ ուշագրավ փաստի մասին տմեկինք միայն Հ. Պարոնյանի մի նախադասությունը, թե Վարդուկյանը կատարել է Մակբեթի դերը¹: Մեր պրպտոմենները՝ լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերելու վերաբերյալ, տվին շնչին արդյունք: Գտանք «Ասիական ընկերության» մամուլում տպագրված հայտարարությունը, որը և օգտագործել ենք մեր «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» գրքում, առանց մանրամասնությունների մեջ մտնելու²:

Այժմ մեզ զբաղեցնելու են հետևյալ հրեք հարցերը.

1. «Մակբեթը» ամբողջապես է բեմադրվել, թե հատվածաբար:

2. Ովքե՞ր են կատարել գլխավոր դերերը:

3. Ո՞ւմ թարգմանությամբ է խաղացվել այն:

Որ «Մակբեթը» բեմադրվել է նախապատրաստական մեծ աշխատանքից հետո, ամբողջությամբ, կասկածից վեր է: Նախ այդպես էլ հայտարարվել է մամուլում. ««Մակբեթ». թատրերդություն 5 արարվածով, 7 պատկերով»³: Բեմադրիչ Վարդուկյանը վերոհիշյալ հայտարարությանը կցել է մի բացատրագիր, որտեղ ասում է, թե «Շեքսպիրի անունն անմահացնող այս վսեմ և հիանալի թատրերդությունը արժանապես ներկայացնելու համար՝ ամեն պատրաստություն ի գործ դրած ըլլալով» է,

որ համարձակվում է ցուցադրել այն Կնշանակի՝ նա լրիվ գիտակցել է իր ձեռնարկած գործի սրատասխանատվութունը:

Պիևտի ամբողջական ներկայացվելու օգտին խոսող մի փաստ էլ ունենք: Վարդուլյանի թատերական բոլոր ներկույթների ծրագրերի մեջ մտնում էր մի հիմնական պիես՝ մեծ մասամբ որևէ պատմական ողբերգության կամ թարգմանական մեկոլորամ, իսկ վերջում ցուցադրվում էին փոքրիկ կատակերգություններ, զավեշտներ կամ կատարվում էին սրարեր: Այսպես էր նշել սկսած «Արևելյան թատրոնի» առաջին տարվանից, և այդպես էլ շարունակվել է հետագա տասնամյակներում: Բացառիկ դեպքերում, երբ պիեսը շատ մեծ է նշել, երեկոն փակվել է միայն հիմնական ներկայացմամբ: Այդպես էր բեմադրվել, օրինակ, Ա. Գյումայի «Մոնթե Քրիստոն», է. Սյուի «Քափառական հրեան», Այդպես է բեմադրվել և «Մակրեթը», որը զբաղեցրել է ամբողջ երեկոն: Սկսվել է ծամբ ութին, շարունակվել մինչև ուշ գիշեր:

Ուստի՝ վեճի առարկա չի կարող լինել, թե Վարդուլյանը, որն այնքան մեծ կարևորություն է տվել Շեքսպիրի անձնավորությանն ու նրա ողբերգությանը, այն ներկայացրել է լրիվ. խոսքը չի վերաբերում հնարավոր մասնակի տողամիջյան կրճատումներին:

Արդ, ովքե՞ր են նշել դերակատարները:

Գլխավոր հերոսի, Մակրեթի վերաբերյալ ունենք Պարոնյանի միանգամայն հավաստի վկայությունը: Երգիծաբանը «Աղագչին շոշերում» Վարդուլյանի դիմանկարը շարադրելիս ասում է. «Նստումի թատրոնին մեջ ներկայացուց Մախլեթը ու կրից բորբոքման ժամանակ անանկ կանոնավոր քայլեր առավ, որ բովը աղջիկ մը ըլլար նե՛ աղվոր սոթիշ մը կըլլար»¹:

Այս տողերից երևում է, որ Պարոնյանը, որն այդ թվականին նոր էր եկել Ադրիանապոլսից, անձամբ տեսել էր ներկայացումը. ափսոս, որ այն ժամանակ դեռ հրապարակախոսական ասպարեզ մտած չլինելով՝ չի գրել իր տպավորությունները: Թեև հումորով ասված, Պարոնյանի մոտ կա ակնարկ Վարդուլյանի հոգեկան բռնկումների մասին:

Մյուս դերակատարների վերաբերյալ վավերական ոչինչ չկա: Ունենք ենթադրություններ, որոնք ավելորդ չենք համարում հանձնել հայ շեքսպիրագետների ուշադրությանը: Մեր կարծիքով լեդի Մակրեթի դերը կատարել է Երանուհի Գարագաշյանը, Մակդուֆի դերը՝ Պետրոս Աղամյանը:

Ապացուցելու համար այս ենթադրութիւնը, սկսենք մի քիչ հեռւից: Ասիական խմբի դերասանական կազմը նույն «Արեւելյան թատրոնի» կազմն էր՝ երկու գլխավոր դերակատարների փոփոխմամբ՝ առաջին սիրահարի, որ «Արեւելյան թատրոնում» կատարում էր Մարտիրոս Մնակյանը, այստեղ՝ Պետրոս Ադամյանը, և առաջին դերասանուհու (պրիմադոննայի), որ առաջ Արուսյակ Փափազյանն էր, այժմ՝ Երանուհի Գարագաշյանը:

Ասիական խումբը 1867 թ. փետրվարի 28-ին ներկայացրել էր «Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց» ողբերգութիւնը, որի մասին մեր թատերական գրականութեան մեջ շատ է գրվել: «Մակբեթը» հայտարարված էր 1867 թ. մարտի 25-ին, շաբաթ գիշեր: Ըստ երևույթի խաղացվել է հայտարարված օրը, բայց ազատասիրական ոգևորութեան գագաթնակետին հասած երիտասարդութիւնը այդ տարիներին Շեքսպիրին այնքան չէր կարող գնահատել ու հասկանալ, որքան կարող էր խանդավառվել «Վարդան Մամիկոնյան» ողբերգութեամբ, որքան էլ այն լինէր գեղարվեստական տեսակետից թույլ: Ապացույց, որ «Մակբեթից» հետո էլ փոխանակ կրկնվելու Շեքսպիրը, հասարակութեան պահանջով երրորդ անգամ կրկնվում է «Վարդան Մամիկոնյանը», որտեղ գլխավոր դերերը կատարում էին Պետրոս Ադամյանը և Երանուհի Գարագաշյանը:

«Մակբեթից» մոտ մեկ ամիս հետո, ապրիլի 29-ին բեմադրվում է «Արտավազդ Բ» ողբերգութիւնը, որտեղ նույնպես գլխավոր երկու դերերը կատարել են Պետրոս Ադամյանը և Երանուհի Գարագաշյանը: Մամուլը այս երկու ներկայացումներին էլ անդրադարձել է բավականաչափ ընդարձակորեն և ամբողջ խմբի կազմից խոսել միայն այդ երկու արվեստագետների մասին⁵:

«Մակբեթը» բեմադրվել է «Վարդան Մամիկոնյանից» հետո, «Արտավազդ Բ»-ից առաջ: Կարող էր պատահել, որ Ադամյանը և Երանուհին գլխավոր դերերով հանդես գային և՛ փետրվարին, և՛ մարտին, և՛ ապրիլին ու հանկարծ այդ արանքում բեմադրված «Մակբեթին» շմասնակցեին, երբ նրանք էին խմբի կենտրոնական երկու սյուների, ու մամուլն էլ մեծ տվյալներ էր տեսնում Գարագաշյանի ու Ադամյանի մոտ, գովում մանավանդ Ադամյանի «Դյուցազնական մասերու մեջ ունեցած ամեն կատարելութիւնները»⁶:

Բայց ինչո՞ւ չի արձանագրվել հայ բեմի այս ականավոր աստղերի երկու նշանավոր դերակատարումները, հարց կտրվի մեզ: Բանն այն է,

որ այդ օրերին մթնոլորտը շիկացած էր Միքայել Նալբանդյանով, նրա «Ազատութունն» էր թռչկոտում բերնից բերան, մեծադիր նկարները վաճառվում ամենուր, մահվան տարեդարձը նշվում. այդքան մեծ ազմուխով, եթե այս բուլոսին ավելացնենք նաև այն, որ նույն այդ օրերին Պետրոս Գուրջանը գրել էր իր «Տարագիր ի Սիպիերիա» այլաբանական պիեսը և Պետրոս Աղամյանն էլ նախապատրաստվում էր հանդես գալ նալբանդյանի դերով, ապա պարզ կդառնա, թե ինչով էր գրազված երիտասարդության ուշքն ու միտքը։ Այս մթնոլորտում «Մակրեթը» չէր կարող այլ կերպ լինել, քան թարմանական որևէ մեկոգրամ։

Բայց սա հարցի մի կողմն է, իսկ ինչու չի գրվել հետագայում, — հարց կտան դարձյալ մեկ։ Բանն այն է, որ դրանից ինը տարի անց «Մակրեթում» նկարագրվածի հար ու նման ոճերն իրով դահ բարձրացող Արզուլ Համիդի երեսուներեք տարվա բնակալուծության ամբողջ շրջանում ակնարկ անգամ չէր կարող լինել նման պիեսի բովանդակության ու նրա դերակատարումների մասին։ Արևմտահայ դերասան-գերասանուհիների կենսագրությունները գրել են Շարասանը, Սմբատ Գավթյանը և Հրանտ Ասատուրը. Շարասանի դիրքը, ճիշտ է, լույս է տեսել 1914 թ., բայց այն նախ մաս-մաս տպագրվել է համիդյան տարիներին, օսմանյան սահմանագրության վաղորդյանին, «Լույս» պարբերականում և այլ հանգևաններում։ Այդ թվականներին նա չէր կարող Մակրեթ անունն անգամ գործածել, ինչպես և Համիտ։ Գուցե դա է պատճառը, որ Շարասանն իր գրքում բուլոսին տեղ տվել է, անգամ Ռուբեն Պինեմեճյանի նման երկրորդական դերասանների, բայց դանց է առել հակադիմադրության, որի մասին խոսելիս անընդհատ պիտի հուլովվելին Համիտ, Օթեկո, կիր արբա. արգելված անունները, ինչպես և շարունակ հիշատակվի անցանկալի Ռուսաստանը։ Հրանտ Ասատուրը՝ շատ զգույշ մի անձնավորություն, հայ թատրոնի մասին գրել է 1920-ական թվականներին և գրել է բացառապես ժամանակաշրջանի մամուլի տվյալների հիման վրա, իսկ մամուլը ոչինչ չէր ասել այդ մասին։ Մեր վերոհիշյալ ենթադրությունը անշուշտ կարիք ունի առավել վավերական փաստերի ու հիմնավորման, բայց որ «Վարդան Մամիկոնյան» ու «Արտավազ Բ» ողբերգություններին մասնակցող Երանոսի Գարագաշյանն ու Պետրոս Աղամյանը՝ խմբի երկու հիմնական ուժերը չէին կարող «Մակրեթի» ներկայացումից դուրս մնալ, դա մենք համարում ենք առարկություն չվերցնող ենթադրություն։

Այժմ վերջին հարցի՝ «Մակրեթի» առաջին թարգմանության մա-

սին: Մեր բանասիրութեան մեջ արդեն վաղուց ասվել է, որ 1864 թ. Մխիթարյանների ներկայացրած «Մակբեթը» այնքան փոփոխված, աշակերտական բեմի էր հարմարեցված, որ դժվար է այն համարել Շեքսպիրի ողբերգութեան այդ թարգմանությունը: Վերջերս բանասեր Հ. Տեր-Ներսիսյանը ավելի հանգամանորեն անդրադառնալով այդ հարցին, ցույց է տվել, որ Մխիթարյանների այդ ներկայացումը Շեքսպիրի պիեսի Դյուսիի կողմից կատարված փոփոխակի հայերեն թարգմանությունն է ֆրանսիսերենի⁷: Մեր միտքը երկար է զբաղվել այն հարցով, թե ինչ տեքստ է օգտագործել Վարդույանը: Համառ պրպտուններից հետո մեզ հաջողվեց գտնել այդ թարգմանչին: Դա բանասեր, բազմաթիվ լեզուների գիտակ, թարգմանիչ հաշիկ Ուղուրիկյանն է՝ Սկյուտարի ճեմարանում Պ. Դուրյանի մտերիմ դասընկերներից մեկը: Նա այդ ճեմարանն ավարտել է հենց 1866 թվականին, նետվել զրական ասպարեզ: Նրա կենսագրի բերած տվյալներից երևում է, որ «Մակբեթը» թարգմանել է դեռևս ճեմարանում սովորելու տարիներին, ամենայն հավանականությամբ վերջին դասարանում: Ահա թե ինչ ենք կարդում մեզ հետաքրքրող այս անձնավորության կենսագրությունում. «Դըպրոցականությանը թարգմանած է «Ճեն Կրիչ» և «Մակբեթ» տրամներն և ուրիշ տասնյակ մը թատերախաղեր Վարդույանի և Պենկյանի խումբերու համար, մասնակցությամբ իր դասընկերներուն՝ Տիգրան Արամյանի, Պետրոս Դուրյանի և Վարդան Լուսֆյանի»⁸:

Այսպիսով՝ Շեքսպիրի հայ թարգմանիչների շարքը համալրվում է մի նոր՝ հաշիկ Ուղուրիկյանի անունով, որի մասին մինչև այսօր, որքան մեզ հայտնի է, մեր բանասիրության մեջ չի գրվել ոչինչ:

Մ Ա Ն Ո Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Հ. Պ ա Ր Ո Ն Յ Ա Ն, Երկերի ժողովածու, հ. II, էջ 254:
2. Գ. Ս տ ե փ ա Ն Յ Ա Ն, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատ. Ա, Երևան, 1962, էջ 311:
3. «Մասիս», 1867, մարտի 20:
4. Հ. Պ ա Ր Ո Ն Յ Ա Ն, նշված աշխատությունը:
5. «Մասիս», 1867, մայիսի 11:
6. Նույն տեղը:
7. «Բազմավեպ», 1964, թիվ 10—12:
8. Թ ե ո գ ի կ, Ամենուն տարեցույցը, 1909, էջ 225: